# Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյանի շնորհավորական ուղերձը Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ



**Սիրելի կանայք, մայրեր, քույրեր**

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:

Առողջ ու արժանի սերունդ դաստիարակելու կարևորագույն առաքելության, պետականության կերտման դժվարին գործընթացների ջահակիր լինելով հանդերձ՝ դուք մշտապես պահպանել եք կանացիությունն ու հպարտությամբ ստանձնել հայ կնոջը բնորոշ ավանդական դերակատարումը: Ձեր անձնվիրության ու իմաստնության շնորհիվ այսօր ևս շարունակում են պահպանվել ու զարգանալ ազգային արժեքներն ու ավանդույթները:
Կրկին շնորհավորում եմ ձեզ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ և մաղթում քաջառողջություն, սեր ու խաղաղություն ձեր ընտանիքներին և երկար տարիների կյանք:

**Արամայիս Գրիգորյան**

**ՀՀ Արարատի մարզպետ**